«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

«Միդա Ազնավուր-Կառվարենցի 100»
կրթաթոշակների շնորհման ծրագիր

Հաստատված է
« Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և
արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2023թ. Հունիսի 5-ի N4/2023 որոշմամբ:

Միդա Ազնավուր-Կառվարենցի 100-ամյա տարեդարձի առթիվ «Ազնավուր» հիմնադրամը Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի հետ համատեղ նախաձեռնում է անվանական կրթաթոշակների շնորհման ծրագիր:
Միդա Ազնավուրը ֆրանսահայ երգչուհի է, Շառլ Ազնավուրի ավագ քույրն է և ֆրանսահայ հայտնի կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցի կինը: Միդա և Շառլ Ազնավուրների համար մշտապես կարևոր դեր է ունեցել տաղանդավոր երիտասարդների շնորհների զարգացումը, նրանց մասնագիտական աճի խթանումը:
Անվանական կրթաթոշակի ծրագրի իրականացման միջոցով «Ազնավուր» հիմնադրամը հարգանքի տուրք է մատուցում արվեստի նվիրյալ Միդա Ազնավուրին՝ շարունակելով տաղանդավոր երիտասարդների առաջխաղացման նրա առաքելությունը:

Կրթաթոշակի տեսակը՝ միանվագ

Չափը՝ 450,000 դրամ
(որից 350,000 դրամը տրամադրում է «Ազնավուր» հիմնադրամը, 100,000 դրամը՝ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի քոլեջը)
Տրամադրման ժամկետը՝ 2023-2024 ուսումնական տարի
Քանակը՝ 5
Շնորհման պայմանը՝ մրցութային

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի քոլեջի այն ուսանողները, ովքեր՝
2023-2024 ուսումնական տարում հանդիսանալու են 2-րդ և բարձր կուրսերի ուսանողներ,
սովորում են հետևյալ մասնագիտություններով՝
երգեցողություն,
էստրադային արվեստ
գործիքային կատարողական արվեստ
պարարվեստ
դերասանական արվեստ
սովորում են գերազանց կամ բարձր առաջադիմությամբ (միջին որակական գնահատականը՝ 7,5-ից բարձր):

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կրթաթոշակի շահառուների ընտրությունը կատարվելու է երկու փուլով:
Առաջին փուլ - Հայտերի ընդունում
2023 թ. հունիսի 20-ից հուլիսի 3
Կրթաթոշակի հավակնորդներից պահանջվում է՝ լրացնել առցանց դիմում-հայտ
կից ներկայացնել ակադեմիական առաջադիմության թերթիկ և կարգապահական բնութագիր,

*տեղական/միջազգային մրցույթների, փառատոների, մշակութային այլ նախագծերի մասնակցության հավաստագրեր կամ պարգևներ (առկայության դեպքում):
Առցանց հայտադիմումները կարող են լրացվել հունիսի 20-ից (ժամը 10:00-ից) մինչև հուլիսի 3-ը (18:00-ն) :

Երկրորդ փուլ - Լսումներ
2023 թ. սեպտեմբերի 1 - 15
Առաջին փուլը հաղթահարած հավակնորդները կմասնակցեն լսումների, որոնց արդյունքում մասնագիտական հանձնաժողովը կընտրի կրթաթոշակի շահառուներին:
Լսումների անցկացման հետ կապված մանրամասները կներկայացվեն առաջին փուլը հաղթահարած հայտատուներին:

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կրթաթոշակը կարող է օգտագործվել միայն սահմանված նպատակներով՝ քոլեջի տարեկան ուսման վարձավճարի մարում, մասնագիտական դասընթացների կամ օժանդակ միջոցների գնում, միջազգային մասնագիտական մրցույթների կամ կրթական ծրագրերի մասնակցության ծախսեր:
Նշված բոլոր պայմաններն ամրագրվում են չափահաս շահառուի կամ անչափահաս շահառուի ծնողի հետ կնքված պայմանագրում: